




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ  
ԳԱՀԻՐԷ (Հասցեագրիչ)

Rédaction du journal arménien

ARCHA LOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան, ողջ դասիկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ »	12

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆՆԵԿ Է  
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՄԱԽՔԸ  
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած  
գրութիւնք եւ չ'են տրուիր:

### ԿԵՂՏՈՏ ԲԱՐՔԵՐ

Մեր մէջ երբ մէկը հանրային օգուտն  
եւ թէ կէտ նպատակի ունենալով Ազգ. ո' եւ է  
հաստատութեան մէջ գործուած զեզծում-  
ները մատնանիչ ընէ, և կամ մենծ աղայի  
մը կամայական փաստաբեր արարքն ու ան-  
ների զանցառութիւնը քննադատելու եւ-  
նէ, իսկոյն իրեն դէմ հալածանքը կ'սկսի-  
կար ձայնը խեղդելու, զինքը լռեցնելու հա-  
մար ամէն հնարք, ամէն միջոց ի գործ կը  
գրուի: Եղած քննադատութիւնը ո'րքան ալ  
իրաւացի և իրողութիւններու վրայ հիմ-  
նուած ըլլայ, գարձեալ անընդունելի և ան-  
ներելի է:

Ասիկայ մեր տոհմային նշանակեալ թե-  
րութիւններէն մին է գաղափարաբար: Ո'ւր  
որ ալ երթանք, աննշան գիւղ մը կամ զար-  
գացեալ կեդրոն մը, մի և նոյն տխրառիթ  
երեւոյթն է որ կը ներկայանայ: Սակայն  
ամէն տեղէ աւելի իւր բոլոր տեղի մեր-  
կութեամբ կը պատկերանայ հոս՝ Փարա-  
ւոններու երկրին մէջ, ուր կը գտնուին հին  
ընդ ազաներուն յետին բեկորները: Ասոնք  
ծթած գաղափարներով տրորուած՝ անըն-  
դունակ են ո' և է յառաջդիմական շարժ-  
ման և թշնամի հակառակորդ՝ ամէն աղա-  
սամիտ ձգտումի ու գաղափարի: Չեն գի-  
տեր թէ ալ շատոնց անցած են այն հին  
բարի ժամանակները, ուր մենծ աղայի մը  
կամքը տիրող օրէնքն էր, և իւր ամէն քը-  
մահած որոշումը՝ մէյմէկ պատգամ:

Այդպիսիները իրենց անձուկ մտքին  
մէջ չեն կրնար սեղմեցնել թէ մէկը՝ որ ի-  
րենց յարգանքն ու համարումը վայելած է,  
ի'նչպէս իրենց դէմ քննադատութիւն կ'ը-  
նէ այս կամ այն գործին առթիւ: չեն կըր-  
նար ըմբռնել սա բացարձակ ճշմարտ-  
ութիւնը թէ անհատական ո' և է շահէ, նը-  
կատումներէ գեր ի վեր են հանրութեան  
շահն ու օգուտը, թէ անձնական խնդիրը  
տարբեր է և հանրայինը բոլորովին տար-  
բեր:

Եւ զայրացկոտ չէ շտով մը կ'սկսին քնն-  
նադատը գործելը մեզազրել: Հէ', կը վայ-  
լէ'ր...: Եւ այդպիսի պարագաներու մէջ  
քանի' քանի' անգամներ սա տխմար բացա-  
գանչութիւնը լուծած է. «չէ' էֆէնտիմ,  
չէ'»: այս ազգը մարդ ըլլալիք չունի...»:

Հետաքրքրական էր գիտնալ թէ այս

կարգի մարդիկ արդեօք ինչպէս կը մեկ-  
նեն յոյն իմաստասէրի մը սա նշանաւոր  
խօսքը. «Կը սիրեմ Պղատոն, այլ աւելի կը  
սիրեմ ճշմարտութիւնը»: ճշմարտութիւնը  
ահա բառ մը որ իրենց ականջին խիստ ա-  
նախորժ կը հնչէ և ջիզերնին կը ցնցէ: Ի-  
րենց սպասածը ոչ թէ ուղիղը, ճշմարտը  
լիւ է, այլ միայն առատ գովեստ ու գըր-  
ուատիք: Այդպիսիք արդէն սովորած են  
տեսնել իրենց շուրջ նկարագրէ զուրկ քըծ-  
նողներ, որոնք այդ մեծամիտ ազաներուն  
փառասիրութեանը կուռքին յաւէտ խըն-  
կարկու երկրպագողներ են:

Եւ արդարեւ մարդ չընար իւր պըժ-  
գանքն ու զայրոյթը զսպել երբ կը տեսնէ  
որ այդ գովեստները հանդէսներու առթիւ  
կարգացուած տարեկան տեղեկագիրներուն  
և ճառերուն մէջ ալ մեծ տեղ մը կը գրա-  
ւեն: Ներքողականներ, սրոնք տխուր գամ-  
բանականներու տպաւորութիւնը կը թողուն  
իրագել անձանց մտքին վրայ...:

Ահա այսպէս շուրջ գովեստ, կոյր հա-  
մակերպում ու քծնում կը պահանջեն այդ-  
մենծ ազաները: Ո'չ ապաքէն իրենք ալ ի-  
րենց կարգին քծնեմ, շողքը թրեմ են: Ըն-  
կերական աշխարհի սանդուխտն աստիճան-  
ներէն սողալով է որ կըցած են բարձրա-  
նալ և գիրք մը գրուել:

ՀԱՅԿՈՒՆԻ

### ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Վերջերս Գահիրէի Գաւառական Վարչութեան  
Քաղաք. Ժողովը՝ եկեղեցւոյ Հոգաբարձութեան  
երկու անդամներով և վարժարանի Հոգաբարձու-  
թեան ալ Ատենայտեովը միասին արտաքոյ կար-  
գի համագումար (toutes chambres réunies)  
նիստ մը գումարած է՝ à huis-clos.

Այդ նստին մէջ Գահիրէի հայ գաղթականու-  
թեան վարչական ղեկավարութեանը, եկեղեցւոյ  
նուիրապետական կարգ ու կանոններուն, եկեղե-  
ցական և ազգային օրինաց կարգ ու սարքին և  
ուրիշ կենսական կէտերու վերաբերեալ կարեւոր  
որոշումներ են արուած:

Բարեպատիւ անխորհրդապահութեան մը շնոր-  
հիւ՝ այդ որոշումներէն մէկ քանին տեղեկացած  
ըլլալով՝ ես ալ իմ կողմէ կը փութամ զանոնք  
ներկայացնել Արաւլոյսի ընթերցողաց:

Հետեւեալներն են այդ որոշումներու ընդհա-  
նուր գծերը.

1. Նկատելով որ հայ ժողովրդի զանազան

մասերուն մէջ աւելի կամ նուազ վտանգաւոր  
կարծիքներ և զգացումներ սկսած են ծնունդ առ-  
նել, Գահիրէի հասարակութիւնը այդ նոր գաղա-  
փարներու ազդեցութենէն ազատ և հեռու պա-  
հելու համար որոշուած է բոլոր բնիկ Գահիրէցի  
հայերուն բնակութեան համար առանձին թաղ մը  
սահմանել: Այդ թաղին շուրջ չի'նական բարձր  
պարիսպներ պիտի քաշուին հայկական այս երկ-  
նային գաղութը աշխարհի միւս բոլոր հայերէն և  
ուրիշ ազգերէն զատելու կողմնակից և իր հա-  
զարեան հարազատ վիճակին մէջ պահպանելու  
համար: Պարիսպներ ա' յնչպիսի բարձր պիտի ըլլան  
որ, եթէ մէկը բուրդերուն վրայ ալ բարձրանայ՝  
չպիտի կարենայ դիտել ներսը անցած դարձածը:  
— այս կերպով Աղեքսանդրիայէն կամ ուրիշ տե-  
ղերէն դիտողներն ալ միջոց չպիտի ունենան քնն-  
նադատելու Գահիրէի ջոջ-ազաներուն այս կամ  
այն արարքները: — Կը հաւաստեն թէ պարսպին  
ճարտարապետները արդէն ապսպրուած են Չինաս-  
տանէն, ու քիչ ատենէն կը հասնին:

2. Նկատելով որ դարավերջիկ գաղափարնե-  
րու հայ վարժարաններէն ներս սողոսկիլը շատ  
վտանգաւոր է, որովհետեւ այդ լուսաւոր գաղա-  
փարները կրնան թէ՛ մատաղ տղայոց և թէ՛ հին  
գրեւորներու տկար աչքերը շլացնել: այդ վտան-  
գին առաջը առնելու համար՝ ամիրաները որոշած  
են Գահիրէի վարժարանէն ճամբել ազատ գաղա-  
փարի ու նկարագրի տէր զասատուները և անոնց  
տեղ բերել իրենց մտատկաբար յարմարող դա-  
սատուներ Գաֆրաստանէն, Զուլուներու երկրէն  
կամ Հօթէնթացիներէն:

3. Պարսպէն դուրս ու է մահկանացուի հետ  
յարաբերութիւն իսպառ պիտի արգիլուի, ի բաց  
ատեալ Կ. Պոլսոյ Ամեն Ս. Պատրիարք Օրմանեա-  
նը, որուն հետ ամիրաները պիտի պահպանեն սերտ  
յարաբերութիւն, և որուն անունը իր մահուա-  
նէն վերջն ալ անխափան պիտի յիշուի պարսպա-  
մէջի իրենց եկեղեցիին մէջ:

4. Ամիրաները իրենք ալ Օրմանեպիլի պաշ-  
տած Օրմանեան էպիսկոսոսք պիտութեան ամն-  
նահաւատարիմ հպատակները ըլլալով՝ իրենց հա-  
տատած և իրենց նոյնպէս էպիսկոսոսք իշխա-  
նութեան տակ առած այս երկնային գաղութը  
պիտի զնեն նոյն պետութեան բարձր հովանաւո-  
րութեանը տակ—չիտակը՝ շատ լաւ մտածեր են:  
Եզրպետութի կիզիչ արեւուն տակ այդ հակայական  
պարիսպներու մէջ փակուած, ի'նչպէս պիտի կա-  
րենային դիմանալ, առանց այդ բարերար հովա-  
նաւորութեան:

5. Նկատելով որ ազաներէն փոքրամասնու-  
թիւն մը հայերէն չպիտի, նկատելով նաեւ որ  
եկեղեցւոյ նուիրապետական կարգ ու սարքերը և  
ազգային սակաւապետական (oligarchique) օ-  
րէնքներու տրամադրութիւնները կը պահանջեն որ  
մեծամասնութիւնը միշտ փոքրամասնութեան հա-  
մակերպի, որոշուած է հայերէն լեզուն բոլորովին  
վերջնել և անոր տեղ տաճկերէնը դնել:

6. Վարժարանի հոգաբարձութեան ատենա-  
պետ ալ, որ իր անունը ֆրանսերէն կ'ստորագրէ,  
առաջարկեց որ աշակերտներուն ո'չ հայերէն գիր  
սորվեցնեն և ո'չ առձկերէն կիթ, պի. այլ անոնց  
տեղ գործածուին միայն ֆրանսական տառերը:  
Այս առաջարկութիւնն ալ միաձայնութեամբ  
ընդունուեցաւ:

7. Երկնային գաղութին մէջ ամուսնութիւնները պիտի կատարուին անպատճառ ծնողաց հաւանութեամբ: Եթէ կրօնական հասցնախ խնդիր կամ ուրիշ ու եւ է արգելիչ պարագայ մ'ալ գոյութիւն չունենայ, դարձեալ մէկ կամ միւս կողմին ծնողաց կողմէ անհամաձայնութիւն մը բաւական պիտի նկատուի արգելելու համար առաջադրեալ ամուսնութիւնը: Չհամակերպողները պարտաւէն դուրս պիտի վճարուին, Ազգաքանդակոյ կամ ուրիշ տեղերու ըմբոս հասարակութիւններուն մէջ խանութ կու համար:

8. Նկատելով որ վերջերս Գահիրէի հայ երիտասարդութիւնը յաջողած էր քաղաքական միութիւն մը գումարել եւ թէ երիտասարդական դասագան համախմբումներ օրէ օր կը շատնան Լսարան, Ազգասպանամ, Որբասիրաց եւլն. եւլն. անուններու տակ, ինչ որ գլխովին հակառակ է ամիրայական սկզբունքներուն եւ նուիրապետական կարգ ու սարքերուն, այդ բոլոր ընկերակցութիւնները լուծուած պիտի հռչակուին եւ ապագային՝ պարտաւէջի հասարակութեան պիտի զըլացուի ու եւ է ձեւի եւ նպատակի տակ գումարումներ ընկուեալ եւ ընկերութիւններ կազմակերպելու իրաւունքը:

« Եթէ հասարակութեան մէջէն ու եւ է մէկը յանդիման լրացիր հրատարակելու ձեռնարկել, այդպիսին եկեղեցւոյ բնութիւն պիտի բանադրուի եւ իր բոլոր պաշտօններէն պիտի զրկուի. եթէ դարձեալ անաստէ՛ կառավարութեան միջոցով պարտաւէջն դուրս պիտի հանուի:

10. Ինքնին հասկանալի է որ պարտաւէն դուրս եւ պարտաւէն ներս ամէն երթեւեկ բացարձակապէս պիտի արգելուի նոյնպէս պիտի արգելուի ու եւ է լեզուով ու եւ է գրքի կամ լրագրի մուտքը այս երկնային պարտաւէջն ներս, հասարակութեան մտքերը չպղտորելու եւ սրտերը չվրդովելու համար:

11. Պարտաւէջի հայ հասարակութեան անհասաներուն խտուի պիտի արգելուի ու եւ է պարագայի մէջ եկեղեցւոյ պատը թուղթ փակցնել կամ ս եւ է խնդրոյ առթիւ հանրագրութիւն ներկայացնել նուիրապետական եւ սակաւապետական (իմացիր՝ կրօնական եւ աշխարհական) իշխանութիւններուն թուղթ փակցնողները ստիկանութեան պիտի յանձնուին. իսկ հանրագիր ստորագրողներուն պիտի սահմանուին ծանր պատիժներ. — ստորագրութեանց թիւը ո՛րքան շատ ըլլայ՝ նոյնքան ծանր պիտի ըլլայ պատիժը:

12. Այս հասարակութեան մէջ ազգային, կրօնական, քաղաքացիական եւ ուրիշ ամէն իրաւունքներէ դուրս պիտի նկատուին ուրիշ երկիրներէ եկող գաղթական հայերը, եթէ երբեք ու եւ է չհաստատուած հանգամանքներու բերմամբ թոյլատրուի անոնց մուտքը պարտաւէջն ներս:

13. Ազգ, ժողովուրդ, իրաւունք, պահանջք բաները պիտի ջնջուին. անոնց տեղ պիտի գործածուին խուճան, ռամիկ, ճնորհի եւ աղաչանք բաները:

Գահիրէի Հայոց համար հաստատուած այս նոր օրէնագրութիւնը, որը դեռ ուրիշ շատ մը ազգագրուա եւ հոգեչա՛ տրամադրութիւններ կը պարունակէ եղեր՝ որոնց մանրամասնութեանց գրք-բարդաբար չկրցանք ծանօթանալ, պիտի յորջորջուի ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԱԿԱՒԱՊԵՏՈՒԹԻՒՆ:

Իր յաւիտեանական վարչապետներու այս խոչոր որոշումները աւետելով Գահիրէի հայ հասարակութեան, տարակոյս չունիմ որ մեծ ուրախութեամբ պիտի ողջունէ ան՝ իրեն համար պատրաստուող այս չինապարսպարմիակ կեանքի նոր դարապուխը:

ՄՏՐԱԿ Ազգաքանդակ

Կրկին Հոգաբարձութեանց երկու համբաւուոր հրաժարագիրները հրատարակուելէ վերջ, բազմաթիւ համակրայից եւ քաջալերական նամակներ ստացած ենք, որոցմէ հետեւեալը միայն կը հրատարակենք իբր համառօտագոյնը:

Այս առթիւ թէ բերանացի եւ թէ գրաւոր կերպով զմեզ քաջալերող բոլոր ազնիւ անձնաւորութեանց մեր ջերմագին շնորհակալութիւնը յայտնել կը փութանք:

Ազգաքանդակ, 7 Սեպտ. 1899

... Խմբագիր,

Եզրիպտական գաղջ օգին տակ թուլացած, օտար դատարարակութեամբ այլասեռած խել մը ջոկերուն վերջերս բռնած եպերեկի ընթացքը որչափ զազրելի՛ այնչափ գնահատելի եւ շնորհաւորութեան արժանի է ձեր անշահախնդրական եւ յառաջդիմական ընթացքը: Արհամարհեցէք անոնց պըժգալի արարքները, անյողող շարունակեցէք ձեր բարձր եւ վսեմ ուղղութեան մէջ, վստահ ըլլալով թէ՛ եզրիպտացեակ երիտասարդութիւնը գնահատելով ձեր օգտաւէտ ձեռնարկը միշտ պիտի փութայ խրախուսել ձեզ:

Ընդունեցէք . . . Խմբագիր, իմ խորին յարգանաց հաւատարմքը:

Յ. Գ. Ա.

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեկ կը հաղորդուի թէ չորեքշաբթի օրը անխորժ գէպք մը տեղի ունեցած է Եկեղեցւոյ դրան առջև, հետեւեալ պարագաներու տակ:

Հայ երիտասարդ մը Եկեղեցւոյ դըրսի դրան առջև իր անվայել վարմունքին պատճառաւ աղմկայոյզ անկարգութեանց տեղի կուտայ, որով կը հաւաքուի հետաքրքիրներու բազմութիւն մը, այնպէս որ հարկ կ'ըլլայ Առաջնորդական փոխ-տեղապահ Արժ. Տ. Մամբրէ քահանայ վարդանեանի եւ Առաջնորդարանի ուրիշ պաշտօնէից միջամտութեան:

Երիտասարդը, ինչպէս կ'երեւի անուղղայ եւ անաստուղ գասակարգի մը կը պատկանի: Որովհետեւ Առաջնորդարանի սպակիները կտարելու չափ յառաջ կ'երթայ եւ ուր ուրեմն ոստիկան զինուորներու միջոցաւ կը ձերբակալուի եւ բանտ կը փոխադրուի:

Մեր թերթը մամուլի յանձնուելու պահուն ցաւ ի սիրտ տեղեկացանք Կեսաբացի ազգայիններէն Տեար Յովհաննէս Պալըքեանի մահը, 60 տարեկան հասակին մէջ: Յիշեալը երկար ատենէ ի վեր անկողնոյ կը ծառայէր:

Հանգուցեալը որ երբեմն Բաղաք. Ժողովոյ ատենապետի պաշտօնը վարած է, իւր անտեսագիտութեան շնորհիւ շատ օգտակար ծառայութիւններ մատուցած է կ'ըսուի:

Անցեալ օրեր տեղի ունեցաւ Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան Ընդհ. Ժողովը: 24 անդամներէն 13ը ներկայ էին, ըսել է ըստ օրինի մեծամասնութիւն էին, ի բաց առեալ կէսնեղիակաւ ժողովականը:

### ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵԱՆՔԷ

120 երեսներէ բաղկացած այս գրքոյկը կը պարունակէ Պերճի (Մ. Տամատեան) հայրենասիրական ոտանաւորները:

Գինն է 5 կրուս ողջ կը գտնուի Խմբագրութեանս քով:

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Խաւրական հիւպատոսարանը Գահիրէի մէջ ձերբակալել տուած է կին մը, որուն վերագրուած ամբաստանութիւնը եթէ իւրաւ է, պէտք է ամենագարշելի մարգակերպ մը նկատել զայն:

Ահաւասիկ եղելութիւնը:

Այս կինը ութն ամիսներէ ի վեր վեց տարեկան յոյն աղջիկ մը չարաչար դանակոծելով սենեակի մը մէջ փակուած կը պահէր:

Երբ կ'իմացուի այս անգթութիւնը, կառավարութեան եւ խաւրական հիւպատոսարանի կողմէ պաշտօնեաներ կը զրկուին հոն, որ խուզարկելով տանիքի սենեակներէն միոյն մէջ կը գտնեն որորմելի աղջիկը, եզրուզները խոշորցած, գազանի մը ճանկերուն նման եւ աչքերն ուռած՝ բնականաբար գանակոծումի պատճառած լացերէն:

Խեղճ աղջիկը նոյնչափ ամիսներէ ի վեր քիչ մը հացով ու ջրով կ'ապրի եղբր, անուանց գանգատ մը կամ դժգոհութիւն մը ցոյց տալու, որովհետեւ գաւազանի հարուածները միտքը բերելով, կը մոռնար նոյն իսկ սովամահ ըլլալու վտանգը:

Գինութիւն մը բացուած է: Կ'ըսուի թէ ձերբակալուած հրէշ կինը, այս խեղճ աղջկան մօրը դէմ ունեցած ոխը լուծելու համար այս անգութ միջոցին դիմած է:

—Աղետալի արկած մը.—Մոգաքարաւի Պերպէտի թղթակիցը կ'իմացունէ թէ, Ել-Օպէյտայի եւ Շարիզի մէջ տեղ շինուած կամուրջը փլեր է կառախուսելին անցած պահուն: Քսան եւ չորս ճամբորդ մեռած եւ երեսունի չափ վիրաւորուածներ կան, որոնց գրէթէ ամենքն ալ վնասուր կամ գործաւորներ էին եւ կը վերագառնային Գահիրէ Աթպարայի կամուրջին շինութեան աշխատութիւնը լրացնելէ վերջ:

—Թրանսպապի ուժերը.—Անգղ. բանակէն Ուոլքըր անուն սպայ մը Թայլանդի մէջ հետեւեալ յայտարարութիւնը ըրած է թրանսպապի զինուորական կացութեան վրայ:

Պօէրները 30-35000 պատերազմիկներ պատրաստ եւ շարժուն վիճակի մէջ կրնան դնել եւ ունին զաշտային շատ լաւ հրետանիներ: Բայց անոնց գլխաւոր ուժը կը կախանայ իրենց կազմակերպութեան եւ ճարտարակութեան մէջ: Ոչ մէկ Պօէր կը պատերազմի առանց իր ձիուն, որոնցմէ իւրաքանչիւրը չորս օրուան ուտելիք եւ 100-150 փամփուշտ կը փոխադրէ: Պատերազմի ժամանակ եթէ յանկարծակիի գան, անմիջապէս սանձարձակ կը թողուն կենդանիները, որոնք կը թուած են իրենց տեղերէն չերբարաւ, եւ իրենք կը պատերազմին:

Եթէ պարտութիւն մը կրեն, իսկոյն ձիերնին կը նստին ու կը փախչին, իսկ եթէ յաղթող ըլլան կը նստուին իրենց ձիերուն վրայ եւ թշնամին կը հալածեն:

Աւելի ճարտար եւ յաջողակ նշանաւոր են քան անգղիական զինուորները:

Այդ սպան կ'երգակացնէ թէ, անոնց դէմ պատերազմելը մեղուներու խուճի մը

հետ պատերազմի ըսկէ: Պօէլնեբուն յազ-  
թելու համար շատ լուրջ շանքեր պէտք են  
և մանաւանդ հեծեալազօրներ դործածելու  
է պատերազմի ժամանակ:

—Գարատաղի իշխանը եւ իշխանուհին,  
որ Պօլիս Սուլթանին հիւր կը գտնուին քա-  
նի օրերէ ի վեր, անցեալ սուրբ Սէլամ-  
լիքի արարողութեան և զինուորական անց-  
քին ներկայ գտնուած են: Սուլթանը փա-  
ռաւոր ձի մը նուէր ըրած է իշխան Միր-  
քոյի:

ԱՌ ՊԱՐՈՆ Ս. Օ.

Արշադրի Զրգ թուոյն մէջ կարգացի  
ձեր «Պատասխան մը» խորագրով յօդու-  
ածը՝ որով փոխանակ հերքելու իմ գրած-  
ներս, կը հաստատէիք զայն՝ չգիտեմ գի-  
տակցաբար՝ թէ անգիտակցաբար, ձեր իսկ  
խօսքերով հետեւեալ պարբերութեան մէջ.  
«Արարկիրցիներն են միայն խորոզները,  
ինչու՞ յօդուածագիրը նոյնը չ'ըսեր Վաս-  
պուրականցիներուն»:

Կը հարցնենք ձեզ՝ Պարոն Ս. Օ.: 1. Թէ՛  
Վասպուրականցիներու խորութիւնները կամ  
անոնց սխալները ձեր խորութիւնները ու  
սխալները կ'արգարացնեն: Ո՞ր սորվեցաք  
այդ տեսակ սքանչելի պատճառաբանու-  
թիւններ: Մենք պարզապէս ընդհանուր  
տեսութիւն մը ըրած էինք խորոզներու  
մասին և ոչ ուրիշ բան:

2. «Թեթևասովիտութիւն» կ'անուանէք  
մեր գրածներն. կը թուի թէ այդ սողերը  
գծած միջոցնուգ խաչը հայելի մը քով  
նստած միշտ ինքզինքնիդ գիտելով զբա-  
ղած էիք:

3. Մեր՝ Որբախնամներու յաջողութեան  
ու բարգաւաճման բաղձացողներէն եղած  
ըլլալը կրնաք ստուգել գիմելով Արժ. Տէր  
Եզնիկ քահանայի՝ որուն սակէ երկուք ու  
կէս տարիի չափ առաջ առաջարկած էինք  
Որբախնամ Ընկերութեան մը կազմակեր-  
պութեան կարեւորութիւնը, երբ դուք գեռ-  
խոր քնոյ մէջ էիք:

4. Եւ որովհետեւ կը յայտարարէք թէ  
«անխտաբար եւ գրկաբաց կ'ընդունուին  
ամեն բարեսէր ազգայինք» կը փափագէինք  
որ ընկերութիւնդ պաշտօնական յայտարա-  
րութեամբ մը հրաւէր ուղղէր ամեն դա-  
սակարգի աշակցութիւնը վայելելու նպա-  
տակաւ. ա՛յն ասան միայն պիտի յուսայինք  
թէ Որբասիրացը իր նպատակը պիտի կըր-  
նայ ընդարձակ սահմանի մէջ իրականացնել:  
7 Օգոստ. 1899. ՀՐ—Ա.Ձ  
Գահիրէ

հաշուեքննիչ յանձնաժողովին մեզ տալիք  
տեղեկութեանց:

... Խմբագիր,

Ամսոյ 22)2ին պատուարման թերթիդ 10րդ  
թուոյն մէջ՝ տեղւոյն Նորակազմ Աղքատախնամ  
ընկերութեան նկատմամբ անխառն ու իմաստէ  
բողոքովին զուրկ բողոքախառն մի յօդուած գըր-  
ուած կար չը—Ազ ստորագրութեամբ, ճիշտ այն  
օրը որ արգէն ընկերութեան Ընդհ. Ժողովոյ հը-  
րաւիրագիրը հրատարակած էիք, որուն տարեկան  
ընդհանուր հաշուոց, Գործ. Ժողովոյ և Ընդհ. Դի-  
ւանի վերջնորոշութիւնները կը զեկուցանէր, այդ  
մասին առարկութիւն մը չունիմք:

Գալով մեր Պ. յօդուածագիրն որն կարգ մը  
գովառանքներ կը տեղացնէ Ընդհ. նախաձեռ-  
նարկներուն, ու կը փութայ միանգամ եւս աղ-  
գասէրի մը դերը ստանձնելով Աղքատախնամի  
օգտակարութիւնը ի յայտ բերել, խնդիր հանրու-  
թեան ներկայացնելով յաւալի իրողութիւն կը  
նկատէ Ընկերութեան ներկայ վիճակը եւ լուռն  
լեզուով՝ ինչ որ արգէն իւր ընածին ձիրքերէն մին  
է՝ կը զրպարտէ Ընկերութեան վարիչները Պէյն-էլ  
Սուրէնեան խմբակ անուան տակ. թո՛ղ խօսի Պ.  
զրոյցը թէ Ընկերութեան գոյութիւնը կամ հիմնա-  
գիրները այդ Պէյն-էլ-Սուրէնի խմբակը չէ՛, եւ  
եթէ ընկերութիւնը անյաջող վիճակ մը ունեցաւ  
եւ վարիչները իրենց աչքին գերանը չի նախատե-  
սեցին, պատճառ մեր Պ. յօդուածագիրն կը հար-  
ցնենք թէ արգեօք խօսելու ու գրելու աստէն  
բնուող ու իրենց անցեալով ու ներկայով ծանօթ  
զէմքեր չէին: Աղքատախնամ Ընդհ. նախորդ նըս-  
տին՝ առ ի չգոյէ մեծամասնութեան յետաձգուե-  
ցաւ. երբ մեր յիշեալ պարոնը Ընկերութեան ըն-  
կերներէն միոյն բարեկամանալով Ընկերութեան  
մէջ սպրդիլ փորձեց պարզապէս լրտեսելու հա-  
մար. կը ցաւիմք իւր անյաջողութեանը, ինչպէս  
Արշադրի թերթին միոյն մէջ տեղւոյն նորա-  
կազմ Որբախնամ Ընկերութիւնը նիւթ ընարելով  
կը վիրաւորէր ազնիւ զգացումները եւ խորու-  
թիւն կը համարէր այս կամ այն քաղաքին որբա-  
նոցին օգնելու: Արգէն Որբախնամ Ընկերութիւնը  
պէտք եղած դասը տուաւ Պ. յօդուածագիրին:

Այժմ մատնանիչ կ'ընէ թէ՛ բժիշկ թէ՛ դե-  
ղագործ եւ թէ՛ մատակարար պէտք է խապտ հե-  
նանան եւ վերջնորի չըլլան ըստ հրամանի ինք-  
նակոյ Պ. յօդուածագիր պարոնին, քանի որ անաղ-  
նիւ են ըսելով, եթէ երբէք անձնական խնդիրներ  
կան ազգային թողով, գանք Ընկերութեան որ  
խնդրոյն նիւթն է, պարզապէս զրպարտութիւն ու  
հակառակորդ այն ամեն բաներու որոնք բարեգոր-  
ծութիւններ են, կը հրաւիրենք մեր պարոնը որ  
իւր չափը ճանչնայ եւ առանց Ընկերութեան ներ-  
քին ու արտաքին գործառնութեանց անդեակ ըլ-  
լալու չամբաստանէ, եւ եթէ չուզեր որ իւր խօս-  
քը իրեն ուղղեմք թող անցեալը մտաբերէ ու  
ազգային եւ անձնական գործոց ուղղութեան մէջ  
ճանչնայ կողիկէն վեր չիլլելու: (Որ ունիցի ահան-  
ջը՝ լսելոյ, լուսիցէ):

Ընկերութեան նպատակը յիշեալ պարոնին  
պատասխանել չէր, այլ աղքատին իրաւունքը  
պաշտպանելով հանրութիւնը գերծ պահել գըրգ-  
ռումէ. քանի որ մօտուստ հաշուեցոյց մը պիտի  
ներկայացնենք ի տես ժողովրդեան:

Ի դիմաց Ընդհանուր Ժողովոյ  
Ասեմալպիւր Վ. Ասեմալպետի  
Գ. Պ. ՍԱՐԲԱՅԵԱՆ Կ. ՃԵՐԱՆԵԱՆ

ԿԻՍԱՄԵՆԻ ԹԱՂՈՒԱԾ ՄԱՐԴԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ամբողջ ուժս ի գործ դրի ձայն մը կամ նը-  
շան մը տալու համար, սակայն ի զուր. բոլոր  
զղարկութիւններս ամուր մը կապուած էին թըմ-  
րութենէ մը: Դազազիս վրայ մէկ քանի ամի հող  
ցանեցին, դարձեալ քիչ մը լուրջութիւն ու նորէն  
լսեցի վար ինկնող հողի կոչարու. սարսիչ որո-  
տում մը: Այլ աննկարագրելի էր այս վայրկեանիս  
զգացած վիշտս ու կսկիծս. կ'ապրէի ու զիս ողջ  
ողջ կը թաղէին. հողին ցանուիլը կամաց կամաց

քիչցաւ եւ ետքը բուրբոլին դադրեցաւ: Դազազիս  
թեթեւ ցնցումները զիս համոզեցին որ թաղուեա-  
րը կը կոխկրակէին վրաս եղած հողերը՝ որոնց տակ  
զատապարտուած էի խեղդուելու. սարսափելի  
լուրթիւն մը արեց ու ես միս միակ մնացի հո-  
զին տակը:

Ժամանակը այլ եւս գոյութիւն չունէր ինձ  
համար, ոչ ալ կորողութիւն ունէին զայն չափե-  
լու, ուստի սկսայ մտածել թէ այս է իմ ճշմարիտ  
մահս, հո՛ս պիտի սպասեմ մինչեւ յարութեան օրն:  
Ինչ ասանէն կերակուր պիտի լինիմ մասկեր որ-  
դերու՝ որոնք անյագութեամբ պիտի յարձակին  
վրաս իբր թէ իրենց համար խնամով պատրաս-  
տուած կերակուր մ'ըլլայի:

Այս այլ եւ այլ խոհերու մէջ տեղ կը լսէի  
նոր անհասկանալի եւ հեռաւոր շշնչիւն մը գերեզ-  
մանիս վրայ: Ժամէ ի ժամ՝ ստեղծով կ'սպասէի  
որ անղէն մարմնոյս վրայ պիտի գան յարձակին  
զարչելի որդերը, ժանեւոր խուրդը, անյագ գե-  
րեզմանի մուկերը եւ ուրիշ ճճիներ՝ որոնց ուսե-  
լու տրուած էի ողջ ողջ: Այս յուսահատութեան  
քառսին մէջ յուսոյ նշոյլ մը ծագելով մտքիս մէջ  
լուսաւորեց գերեզմանիս խաւարը: այն է թէ գու-  
ցէ բարեկամս կասկածելով մահուանս վրայ զիս  
զուրս հանել կ'ուզէ գերեզմանէս, հոգն մէկզի ը-  
նելով: Այս մտածութիւնը կ'սկսայ քաղցրութիւն  
մը եղաւ. ցուրտ գերեզմանիս մէջ:

Կափարիչը վրայէս վերցնելէն ետեւ զգացի  
ինչպէս բերս ձեռք մը գլխէս ու կուրծքէս բըռ-  
նելով քաշեց հանեց զիս գերեզմանէն դուրս կըր-  
կին զգացի զով օգին կենսատու ազդեցութիւնը .  
եւ սուր ու թափանցիկ ցուրտ մը մտաւ անդամ-  
ներուս մէջ: Յետոյ վրաս բան մը ձգելով քաշե-  
ցին տարին աշունչ բեռան մը պէս: Զգածմունք-  
ներս իրար խառնելով կարծեցի թէ պատահաւոր  
հրէշտակները զիս կը քաշեն կը տանին աշխարհիս  
անաչառ դատաւորին առջեւ յաւիտենական դա-  
տապարտութեան համար:

Այսպէս ժամանակ մը քաշեցին զիս ու ետքը  
հողի կոչտի մը պէս ձգեցին, միայն թէ գետնի  
վրայ չէ. ցնցումներէն խելքս գլուխս գալով հաս-  
կըցայ թէ այլի մը մէջ եմ, եւ համոզուեցայ մի-  
քանի լսած խօսքերէս թէ՛ ինկած եմ զիսպատիկ-  
ներուն ձեռքը՝ որ կը տանին զիս միտած մարդոց  
զիսկներու անդամազնուութեան վայրը: Դիպա-  
տիկներէն մին կ'երգէր ձայնով գինետոտներու  
մէջ երգուած ցուց (մանի) մը:

Երբ սայլը հասաւ իր որոշեալ վայրը, զիս  
վար առին եւ տարին ուրիշ տեղ մը՝ ուր թանձր  
ու տաք օդը համոզեց զիս որ ասք խցի մը մէջ  
եմ: Կոշաւ ձեռք մը վրայէս մէկէն քաշեց հանեց  
հանդերձներս ու մերկացուց զիս, եւ այս վիճա-  
կին մէջ զիս զրին սեղանի մը վրայ: Երկու գիա-  
պատիկներու ու հոն գանուած ծառաներու խօս-  
քերէն հասկցայ որ գիշերը անդամախառնութիւն  
պիտի ընեն վրաս: Այսպէս թէեւ ազատուած էի  
սեղանի հողին մէջ խեղդուելէն, սակայն կը  
խորհէի թէ պիտի մեռնիմ անդամախառն դանակ-  
կին տակ: Թո՛ղ մարդ իմ տեղի իմ տեղ լինի ու խորհի  
թէ ինչ զգածմունքներ կրնայ ունենալ անձ մը որ  
անգամներուն ու ջիւղերուն տկարութեան մէջ բո-  
լորովին կենդանի էր, ու ինչք կը հասցնէր այն  
չարչարաններուն որ իրեն պիտի հանդիպէին:

Աչքերս գոց էին այդ պատճառաւ չկրցի հաս-  
կընալ խցին մէջ եղած շշնչիւնը, սակայն կը թը-  
ւէր ինձ թէ հոն ժողովուած էին անդամազնու-  
թեան վրայ դաս առնող աշակերտները: Ոմանք  
սեղանին քով գալով՝ ինչպէս կը կարծէի՝ աչքեր-  
նին տնկեցին նայեցան եւ խնդացին որ իրենց  
այսպէս լաւ ատաղձ մը բերուեցաւ: Վերջապէս  
անդամախառն ալ եկաւ քովս: Չիս կտոր կտոր  
ընկէն առաջ քանի մը կալվանեան փորձեր ըրու-  
վրաս: Բերին Վոլքայիան սիւնակ մը: Առջի զըպ-  
չելուն հոսանքը չանթի պէս ջիւղերուս մէջ մտաւ  
եւ ձայն մը հանեց տաւիղի լարերու նման: Աշա-  
կերտները այս ստեղծի փորձին մէջ՝ ինչպէս կը  
կարծեմ, ասորթելի դարմացմամբ նայեցան իմ ան-  
ընական ցնցումներու: Երկրորդ զպչելուն երկու  
աչքերս ալ բացի, ու առ ի բանը որ տեսայ՝ էր  
այն բժիշկը որ զիս կը դարմանէր հիւանդութեանս  
ատեն: Թմրութիւնը զիս կապած էր բոլոր ան-  
դամներս, սակայն կըրք ճանչնալ ուսումնարանի  
աշակերտներն եւս որք մտերմութիւն ունէին ինձ  
հետ. բայց երբ տկարութեանս պատճառաւ կրկին

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է Մ Ո Ւ Ս Ք Ի Փ Ո Ղ Ո Ց Գ. Է. ՄԵԼ Վ Ա Ճ Ե Ա Ն Գ Ա Ն Ի Ր Է Մ Ո Ւ Ս Ք Ի Փ Ո Ղ Ո Ց

